Զաթու[20] պէրէ՛ք— կցան[21] անէնք,
Ու պէրէ՛ք— թաթէր դնէնք,
Ցէղ պէրէ՛ք— վարսը քսէնք:

Գորիսի տարբերակ՝

Ճօլի, Ճօլի, մէր Ճօլի,
Սրվը քէթկալ, մէր Ճօլի,
Սրվը լէշակ, մէր Ճօլի...

Ճօլին յէնկավ ծօվը...
Ծօվը ծիրանի դառավ,
Ջօրս կօղմը հիլի[22] դառավ...

Կութանը ընջօտալ ա[23],
Մրկրկնին[24] ա կրորդնօտալ[25],
Ծըլծըլօցան[26] էք բրղարալ,
Կրթկրթօցան[27] էք բրղարալ...

Ու պէրէ՛ք— թաթին տընէնք,
Ցէղ պէրէ՛ք— վարսը կրցէնք,
Ալիր պէրէ՛ք— փիթի[28] անէնք...

Դուրս են կանչում **կին-արև**, որը ընկել է ծովը— երկինքը ծով էր: Հավաքած ձու և յուղով պատրաստում էին ձվածեղ և ուտում միասին:

Ցանքսերը ամեն պատահարից ազատ պահելու համար արտի մեջը տրնկում էին **öրփաքարնիր**՝ ուրբաթարուր— բոշնի փայտի երկճեղ ճյուղ, մոտ 90—100 սմ երկարությամբ, որի երկու ճյուղերն իրար դիմաց կորացած՝ իրար վրա ոլորում էին: Կազմվում էր մի լայն օղակ: Պատրաստում էին մեծ պասի վերջին ուրբաթ օրը և թաթախում Զատկի **ախարի**՝ մատաղի արյան մեջ: Հավատում էին, որ թե՛ բոշնի փայտի և թե՛ **մատաղի** արյան զորությունը պիտի պաշտպաներ ամեն վտանգից և մանավանդ աչք տալուց՝ չար աչքը կդիպչեր **öրփաքարնիրին** և նրա ազդեցությունը կչքանար: Մյուս կողմից՝ հասկն էլ կձգտեր հասնել **öրփաքարնիրի** բարձրությանը:

Նույն նպատակով և մանավանդ մորեխից և մկնից արտը պաշտպանելու համար կանայք մանավանդ **Համբարձման**[29] օրը **կաքնավ մատաղ** էին բերում և մատաղը թափում արտի շուրջը:

---

20 **Զարու**—հաստ պարան:

21 **Կցան անէլ**—հանգույց անել:

22 Հայելի:

23 Ժանգոտել է. **ունջ**՝ ժանգ:

24 Մկները:

25 Խունճունճացել է, գանգուրացել անգործությունից:

26 Ծլլալուց:

27 Կրկըրցնելուց:

28 Փոքր **բաղարճ**:

29 Տոների անունները գրում ենք մեծատառ, որպես հատուկ անուններ (ծան. խմբ.):